# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը.**

Արամ Մեյմարյան

**2. Զբաղեցրած պաշտոնը.**

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

**3. Գործուղման վայրը և ժամկետները.**

Աբու Դաբի (Արաբական Միացյալ էմիրություններ), հոկտեմբերի 30-ից 31-ը

**4. Հրավիրող կողմը.**

Արաբական Միացյալ էմիրությունների կլիմայի հարցերով հատուկ բանագնաց, COP 28-ի նախագահ Սուլթան Ահմեդ Ալ Ջաբեր և ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն

**5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցություն կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի Կողմերի 28-րդ համաժողովին ընդառաջ նախարարական հանդիպմանը՝ միտված կլիմայի փոփոխությանն մեղմման և հարմարվողականության գործողությունների և ֆինանսական աջակցության արագացմանը և ուժեղացմանը, մասշտաբավորմանը, ինչպես նաև գործողությունների հստակեցմանը՝ հաշվի առնելով մարդածին գործունեության արդյունքում կլիմայի փոփոխության լայնածավալ անբարենպաստ ազդեցությունները և դրա

հետ կապված մարդկանց, նրանց կենսապայմաններին, բնությանը և բնական միջավայրերին հասցվող կորուստները և վնասները:

Հանդիպումը անցկացվել է կլոր սեղան քննարկումների, զուգահեռ թեմատիկ և ոլորտային քննարկումների, երկկողմ հանդիպումների ձևաչափով:

Համաժողովին մասնակցել են առավել քան 70 երկրի նախարարներ և 100 պարվիրակության անդամներ:

**6. Քննարկված թեմաները.**

Կլոր սեղանն քննարկումները անցկացվել են հետևյալ թեմաներով.

➢ **Մինչև 2030 թվականը համատեղ ջանքերով ձևավորել դիմակայուն, կայուն և արդար ապագայի տեսլական՝ Փարիզյան համաձայնագրի նպատակներին հասնելու համար:**

Մասնավորապես անդրադարձ է կատարվել հետևյալ հարցերին.

- Որտե՞ղ ենք ցանկանում լինել մինչև 2030 թվականը և դրանից հետո,
- Ի՞նչ պետք է ձեռնարկել առաջիկա տարիների ընթացքում՝ նպատակին հասնելու համար,
- Երկրները ի՞նչ սպասելիքներ ունեն COP 28-ից՝ անհրաժեշտ փոխակերպման համար:

➢ **Գլոբալ համերաշխության ձևավորում. կորստների և վնասների հիմնադրամի գործառնականացում և ֆինանսավորման պայմանավորվածությունների կարգավորում:**

Կորստների և վնասներ համատեքստում կարևորվել է զարգացող երկրներին և նրանց համայնքներին աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունը, որոնք բախվում են կլիմայի փոփոխության ամենածանր հետևանքներին: Հատկապես կարևորվել է հարմարվողականության և դիմակայունության համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը, քանի որ մինչ այժմ կատարված աշխատանքները բավարար չեն կլիմայի հետևանքով առաջացած ազդեցություններին դիմակայելու համար: Նաև ներկայացվել է կորուստների և վնասների վերաբերյալ անցումային հիմնադրամի կոմիտեի կողմից

իրականացվող և նախատեսվող աշխատանքները, մասնավորապես զարգացած երկրների կողմից ֆինանսական աջակցության տրամադրման հնարավոր մեխանիզմները, կարևորվել է այդ գործընթացում գնահատման և թափանցիկության անհրաժեշտությունը:

Թեմատիկ օրերը նպատակաուղղված էին մարդկանց, նրանց կյանքին և կենսամիջավայրերին առաջնահերթություն տալուն, Էներգիայի փոխակերպման արագ անցմանը, կլիմայական ֆինանսավորման փոխակերպմանը:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալը մասնակցել է «Կլիմայական ֆինանսավորման համար նոր շրջանակի կառուցում» թեմայով բարձրաստիճան նախարարական հանդիպմանը:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Համաժողովին նախարարական ելույթ նախատեսված չէր: Կլոր սեղան քննարկումները և թեմատիկ քննարկումները նախատեսված էին մտքերի և տեսակետների փոխանակության համար, ինչը արձանագրվում էր՝ COP 28-ի գագաթաժողովին որոշումներ կայացնելու նպատակով:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալը ունեցել է երկկողմ հանդիպումներ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Շվեդիայի, Բուլղարիայի, Սլովենիայի պատվիրակության ղեկավարների, Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի գլխավոր քարտուղարի, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային խմբի համանախագահի հետ: Քննարկվել են ոլորտի զարգացման հեռանկարները, համագործակցության նոր հնարավորություններ և 2024 թվականին COP 29-ի հյուրընկալության հետ կապված հարցեր:

**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի գլխավոր քարտուղար Ն.Գ. Սայմոն Սթեյլի, Սլովենիայի պատվիրակության ղեկավար, Ն.Գ. դեսպան Սմիլյանա Կնեզի,

Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային խմբի համանախագահ Թինա Կոբիլշեկի և Բուլղարիայի Շրջակա միջավայրի և ջրերի նախարար Ն.Գ. Յուլիան Պոպովի հետ քննարկվել է 2024 թվականին Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի կողմերի 29-րդ համաժողովի հյուրընկալության հարցը: Հաշվի առնելով, որ կողմերի 29-րդ համաժողովը 2024 թվականին անցկացվելու է Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային երկրներից մեկում, Հայաստանի Հանրապետությունը, որպես Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային խմբի անդամ, 1994 թվականից ի վեր, առաջին անգամ դիմել էր տարածաշրջանային խմբին՝ Կողմերի 29-րդ համաժողովը հյուրընկալելու հայցով: Կողմերի 29-րդ համաժողովը հյուրընկալելու համար դիմել են նաև Բուլղարիայի և Ադրբեջանի Հանրապետությունները:

Հաշվի առնելով Արևելյան Եվրոպայի տարածաշրջանում բարդ քաղաքական իրավիճակը, արդեն մեկ տարի առանց և առկա ձևաչափերով քննարկվում է COP 29-ի հյուրընկալության հարցը: Ռուսաստանի դաշնությունը հայտարարել է, որ արգելափակելու է ցանկացած Եվրամիության անդամ երկրում, այդ թվում Բուլղարիայում անցկացնելու տարբերակը:

Հայաստանի պատվիրակության ղեկավար, շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանը երկկողմ հանդիպումների ընթացքում հստակ նշել է, որ Հայաստանի Հանրապետության համար քննարկվող բոլոր տարբերակները՝ COP 29-ը հյուրընկալել Հայաստանում, Բուլղարիայում, ինչպես նաև Բուլղարիայի այլընտրանքային առաջարկությանը՝ անցկացնել տեղաբաշխված տարբերակով՝ Արևելյան Եվրոպայում սական ոչ Եվրամիության անդամ հանդիսացող մի քանի երկրներում (Distributed COP), իսկ համաձայնության չգալու պարագայում, ըստ Կոնվենցիայի ընթացակարգերի, գլխամասում՝ Բոննում, ընդունելի են, բացառապես Ադրբեջանում անցկացնելու տարբերակից, հաշվի առնելով Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները: Առաջարկություններ կքննարկվեն Արևելյան Եբրոպայի հաջորդ տարածաշրջանային հանդիպմանը՝ առցանց տարբերակով, ս.թ. նոյեմբերի 3-ին:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Որոշում կայացնողների կողմից համաժողովի ընթացքում հնչած տեսակետները և մտքերը ուղենիշ կհանդիսանան ոլորտում քաղաքականության մշակման և արագացման համար, ինչպես նաև կամփոփվեն Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի քարտուղարության կողմից և արդեն Կոնվենցիայի համապատասխան որոշումների տեսքով կներկայացվեն ս.թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 12-ը Դուբայում անցկացվող Կողմերի 28-րդ գագաթաժողովին:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը**

Արամ Մեյմարյան

02.11.2023թ.